ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 04 » ապրիլ 2025թ. No 2051 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՐԲԻՏՍԿԻ ՔԻՄԻԱԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ, Կ. ՄԱՐՔՍԻ Փ.124-Ա, ԻՐԲԻՏ, ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՇՐՋԱՆ, 623856 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԻՐԲԻՏՍԿԻ ՔԻՄԻԱԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ, Կ. ՄԱՐՔՍԻ Փ.124-Ա, ԻՐԲԻՏ, ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՇՐՋԱՆ, 623856 ՌՈՒՍԱՍՏԱՆ «ՄՈՔՍՈՆԻԴԻՆ ԱՎԵՔՍԻՄԱ ՄՕՔՍՈՆԻԴԻՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 0,2ՄԳ; (60/6Х10/), (60/3Х20/), (100/5Х20/), ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 5-րդ և 52-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձաքննության 01/1251-25 առ 17.03.2025թ. բացասական եզրակացությունը՝ Ռուսաստանի Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կ. Մարքսի փ.124-ա, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կ. Մարքսի փ.124-ա, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856 Ռուսաստան «Մոքսոնիդին Ավեքսիմա մօքսոնիդին դեղահատեր թաղանթապատ 0,2մգ; (60/6x10/), (60/3x20/), (100/5x20/), բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 22880 բացասական եզրակացությունը, առ այն, որ համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետի՝ դեղի գրանցումը մերժվում է, եթե փորձաքննությամբ պարզվել է, որ՝ (...) որակը չի համապատասխանում օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին (...):

Դեղի որակը չի համապատասխանում փորձաքննության ընթացքում հաստատված սպեցիֆիկացիային «Նկարագրություն» ցուցանիշով. հիմք՝ լաբորատոր փորձաքննության R-2025-017 արձանագրություն՝ տրված 24.02.2025 թվականին:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Ռուսաստանի Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կ. Մարքսի փ.124-ա, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, Կ. Մարքսի փ.124-ա, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, 623856 Ռուսաստան «Մոքսոնիդին Ավեքսիմա մոքսոնիդին դեղահատեր թաղանթապատ 0,2մգ; (60/6x10/), (60/3x20/), (100/5x20/), բլիստերում» դեղի ընդհանուր հիմունքներով գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ